

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խոթագրւտան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Ուղարկութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում էն
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սրանով յայտնում եմ, իմ եւ որդեցւոյ կողմից, խորին հնորակալութիւն այն բոլոր
մեր բարեկամներին, ծանօթներին, իմ հանգուցեալ ամուսին

ՍՏԵՓԱՆ-ԲԵԿ ԻՍԶԱԳԵԱՆՅԻ

ընկերներին, զանազան անձանց եւ հիմնարկութիւններին՝ Թիֆլիսում, Շուշում, Բագ-
լում եւ այդ քաղաքներից դուրս՝ որոնք նամակներով, հեռագիրներով, կամ իրանց
հեռագրային ցանցերով եւ կամ անձամբ պատուեցին նրա յիշատակը, մասամբ թեթեւաց-
նելով դրանով այն խոր վիշտը, որ պատճառեց մեզ ամուսնուս յանկարծակի մահը:

1—1

Փեփրոնիա Իզրայէլեանց

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց.
Վասիլ Արաշէ. Երկրաշարժից վնասվածների
օգուտ. Նամակ Դամասկոս. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.
ԽԱՍԻ ԼՈՒՐԵՐ. Մանրակար. Հեռագիրներ.
— ՍՏԵՓԱՆԻՆԻՆԻՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Առանց Մոխարեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՄԱՆ ԶՐՈՅՑ

Մի զարմանալի այցելու ունեցւոյ մենք, ըն-
թացող Զարմանալի է նրանով, որ հանգիստ
ու դադար չունի. ամէն ժամ, ամէն րօպէ գա-
լիս է, ծնունդ է մեր դռները, խօսում է եւ
լինչդէս է խօսում. Բարձր ձայնով, յամուտ ու
անկերթ, երբեք չէ տեսնված, որ նա լոկ լոկ
այն պատճառով, որ լսողներ չունի. Ունի, չու-
նի. այդ մի եւ նոյն է. նա գալիս է իբրեւ
անխոսակի ձակատագիր, պահանջում է, որ
իրան լսեն, մանաւանդ պահանջում է, որ հա-
տկանան:

Լողի ու հասկացողի համար դա մի սքան-
չիլ բարեբաղ է, մի գլխաւոր մայր, որ ոչինչ
չէ լինում երջանկացնելու, աշխարհային բոլոր
բարիքները մատակարարելու համար. եւ կան
պարզիւ թախտաւորներ, որոնց տուած է լսե-
լու եւ հասկանալու ընդունակութիւն. Շատ են
եւ այնպիսի դժբախտներ, որոնք ոչ լսում են
եւ ոչ հասկանում. Այդպիսիների համար մեր
խորհրդաւոր այցելուն մի կատարեալ տանջանք
է, մի անելի ծանրութիւն, որի տակ ջարդվում
ու փլուզում է ամէն մի բարեկեցութեան նշույլ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՏՈՆ ՄՈՒՆԱՐԵԱՆ

Մեծ հարուած մընդունեցան Դրանսիոյ
Նիդրլանդները. արտաքին կարգի արկած մի-
կա իրենց գլուխը:

Առանց Մոխարեան Հայաքաղաքի երեսփոխ-
աւորութեան պատգամաւորաց ժողովին ա-
ռաջին քարտուղարներէն մէկը, Արմէնիա՝ ամ-
աթիւններին հոգին եւ ալ բազուկը, խէլ մը գիտ-
նական ընկերութեանց նախագահն եւ անդա-
մէն խալիպայի ամոնայ վեցին, Բուդապէստ քա-
ղաք փոխանցեալ:

Վերջին աստիճանի մեծ ցաւով կանոնը
գրեւէ ձեռու ընդ, որ այս երեւելի մարդուն
մայր ծնունդանքը. մարդու մը՝ որուն բոլոր
կենդանի անդուլ գործունէութիւն մըն էր ու
հասարակաց գործունէութեան նուիրուած:

Շատ մեծ արժանիք ունեցող անձ մը կոր-
նացող յանձին Մոխարեանի, Հունգարիոյ օ-
րէնագրութիւնը, հունգարական լրագրութիւնը,
գիտական աշխարհն ու բոլոր Դրանսիոյ անդի-
թիւն լրագրի յօդուածագիր սկսաւ Մոխա-
րեան իր գործունէութեան ասպարէզը. եւ մին-
չեւ իր մահը հաւատարիմ մնաց անոր մէջ.
Քաղաքային եւ մատենադարան հիմնական կա-

Մարդկութիւնը շատ լաւ է ուսումնասիրել
խորհրդաւոր այցելուին. Դեռ ո՞ր ժամանակից
գիտեն, որ նրան խորհրդն ու հասկացողները
այնպիսի թախտաւորներն են, որոնք լայն,
ստեղծագործող միտք ունեն. երբ այդ միտքը
կարողանում է բարձր թռչել, մի հայեացքով
չափել լայն ու միջ հորիզոնները, երբ նա կարող-
անում է հաւաքել ու մի տեղ ժողովել խոր-
հրդաւոր այցելուի խօսածները, այն ժամանակ
նա, այդ միտքը, կենդանի գործ է, ամբողջովին
ստեղծագործութիւն, ամբողջովին երջանկու-
թիւն:

Իսկ երբ միտքը մանրացած է, հիւանդոտ,
երբ նա չը գիտէ աշխարհներ տեսնել, չէ կարող-
անում դուրս գալ իր նեղ ու մութ խցիկից,
նա չէ կարողանում ոչ միայն հասկանալ, այլ
նախ իսկ եւ լսել զարմանալի այցելուին. եւ
սարսափելի կերպով պատժվում է դրա համար:
Միտքն է ճնշված ու արնաքամ, դժբախտ ու
լալկան:

Ձը գիտեմ, հասկացած, թէ ով է այդ խոր-
հրդաւոր այցելուն. Դա ինքը, կենդան է:
Հիմա հարցէ՛ք ձեզ. ինչ տեսակ միտք ենք
մենք, հայեր:

Պատասխան դոնելը դժուար չէ. Ի՞նչ է մեր
դուրսը. Դժնշված ու տափալացած կենսաբի-
ծանրութեան տակ, մենք ամենքս հասկանում
ենք, որ կենսաբի խորթ զաւակներ ենք, որ
մեզ համար չէ դարձնել. դալը... Իսկ սա ուղ-
ղակի նշան է, որ մեր միտքը մանրացած է, որ
նա թոփք չունի, բանտարկված է իր նեղ ու
մութ խցիկում:

Մանր միտքը կարող է եւ մանր, չնչին շա-
հեր ունենալ. Մենք ոչ չենք ձգտում մի բան
ստեղծագործել մեր երջանկութեան, մեր բարո-
ւութեան համար. մենք միայն փոքրիկ գործերի
վրա կարող ենք մեկնել, մեր աչքերը կարող են

որողութիւն, ճիշդ դատաստան, արագ մտածու-
թիւն, ժիր գաղափար, արտաքին կարգի աղ-
նուական եւ վճիռ ո՞՞՞ստե՛ք են իր հրապա-
կագրութեան յայտարարները:

Գիտութեան ասպարիզին եւ ի մասնաւորի
պատմութեան ճիւղին մէջ՝ չուտով սկսաւ իր
կարողութիւնն արժեքները:

Կողքայ պատգամաւորաց սենեակը յանձին
Մոխարեանի իր ամենէն գործունէայ անդամը.
Թէպէտ ինք զինք հրապարակաւ շատ քիչ
անգամ ցուցուց, բայց այնչափ աւելի մասնա-
ժողովներուն, քարտուղարական պաշտօնին եւ
ժողովները վարելուն մէջ երեւելի ըրաւ. Այն-
պէս որ ասոր նկատմամբ երեսփոխանաց սե-
նեակը՝ քիչ ատենի մէջ իրեն արժանի յաջորդ
պիտի չը կարենայ գտնել:

Շատ ու շատ կը գործէր. եւ միշտ կը գոր-
ծէր. Կրնանք ըսել թէ իր գործունէութեան
զոյն եղաւ եւ ոչ իսկ ան ատեն կրցաւ հանդ-
չիլ, երբ դժուար հիւանդութիւնն իր ամուր եւ
տոկուն կազմուածքին վրայ յարձակեցաւ.
Դործեց՝ մինչեւ որ գրեւ ձեռքէն ինկաւ, գոր-
ծեց՝ քանի որ գլուխն իրենն էր:

Միւրեկի ու համակրական անձ մըն էր. Ամէն
մարդ կը յարգէր ու կը սիրէր զինքը. Թէպէտ
ունեցաւ հակառակորդներ, բայց թշնամի՝ ոչ:

Թէ կարողութեան, թէ փութեանութեան
ու թէ միանգամայն սիրուն ընտրութեան
կողմանէ մեծ մարդ մը կորսնցուց ազատամիտ
կողմնակցութիւնը, տէրութեան պատգամաւո-
րաց ժողովը եւ հունգարական համակրութե-

տեսնել միայն մանր-մունք բաներ. Իսկ կենսաբի
չարունակ ծնունդ է մեր դուռը, ցոյց է տալիս
թէ բախտաւոր լինելու համար ինչքն էր պիտի
մոռանաւ. եւ տանջում է նա եւ պիտի տանջէ
անվերջ, յաւիտեան...

Ի՞նչպէս չը տանջէ նա մեզ. ինչպէս խորթ
ու անգութ մայր չը լինի նա մեզ համար, երբ
մենք այնքան մանր մարդիկ ենք, այնքան մանր-
մունք հարցերի վրա ենք մեր օրը միմիայն-
նուած:

Երեւակայեցէ՛ք. Մենք ընդունակ ենք անա-
գին աղմուկ բարձրացնել մի որ եւ է դատարկ,
ինքն ըստ ինքեան չնչին հարցի առիթով. եւ
յիշում եմ, տարիներ առաջ մի ինտելիգենտ
մարդ, մի լուսավորված անհատ, որ կարող էր
օգտակար լինել իր ազգին շատ բաների մէջ,
զբաղված էր այն հարցով, թէ ներքին է արդեօք
տալ մի մարդու անուն, առանց աւելացնելու
այդ անուն «պարոն» բառը. Աւելի առաջ
գնացող, նա արդէն գտնում էր, որ կատարեալ
յանցանք է, երբ օրինակ, մի եպիսկոպոսի
անունն չեն կպցնում «արքայան» տիտղոսը.
Եւ խօսում էր նա այնպէս, որ դուրս մի րօպէ
անգամ չէիք կասկածի, թէ մարդը գտել է եր-
ջանկութեան ճանապարհը եւ երբ «պարոն»,
«արքայան», «բարեհաճեց», «չնորս արաւ» գե-
ղեցիկ բառերը շարվում են մի մի ձախ, դա
արդէն նշանակում է, որ մենք կորած չենք,
կապերնք եւ շատ գեղեցիկ կապերնք:

Եթէ դուք ծիծաղում էք այս երեւոյթի վրա,
եւ չեմ կարող ծիծաղել. եւ գիտեմ, որ դա
շատ ընտանի երեւոյթ է. Նեղիկ հօրիզոնի մէջ,
նեղված միտքով, ուր մանր-մունք իրեն
ու դէմքեր են պտուտում, ուրիշ բան չէ էլ կա-
րել տեսնել. Հայեացքները, մարդկանց հետա-
քըրքութեան առարկաները ամենալաւ յայտա-
բարներն են, թէ ինչ զրույթեան մէջ է մի հա-
սարակութիւն. եւ երբ դուք տեսնում էք, որ
«պարոնի» կամ «մեծապատիւի» կամ թէ «բա-
րեհաճեց»-ի հարցերն են, որոնք անապին, կեն-
սական նշանակութիւն են ստանում, կարող էք
ասանով լինել, որ այդպիսի հասարակութիւնը
ոչինչ չէ կարող ստեղծել իր բախտաւորու-
թեան համար:

Մի տարբերակ զուգահեռութեամբ իմ յի-
շած ինտելիգենտը տաքացած խօսում եւ ա-
պացոյցներ էր բերում մի փոքրիկ շրջանում, ուր
մի բողջիկ սարսափելի գոյներով նկարագրում
էր աղքատ հիւանդների դրութիւնը. մեծ քա-
ղաքի յետ ընկած մասերում. նրա խօսքերը մի
կատարեալ դժուար էին բաց անում մեր աչքեւ:

Թիւնը. Իսկ Դրանսիոյ անկախ եւ անհաւանդ հոն
տեղի աղքատները՝ նորէն աղքատացած մեծ կա-
րողութիւն ունեցող տաղանդաւոր գիտնակա-
նով մը, զոր հայ ազգն իրաւամբ իր պարծան-
քը կը համարէր եւ մատով կը ցուցնէր. —
որոնք՝ ամէն ատեն բոլորեալ սիրով կը ծա-
ռայէր եւ ամէն ատեն անոր կարօտութիւննե-
րը կը հոգար:

Հունգարական օրաթերթերն ու շաբաթաթեր-
թերն ատեն քաջառուութեան, մեծ ցաւով եւ
մեծ գովասանք կը խօսին Մոխարեանին վրա.
Magyar-Nemzet (Հունգարական ազգ) լրա-
գիրը — տէրութեան գործին — յաջորդ կերպով
կրնէ յիշատակ Մոխարեանին վրա:

«Հունգարական քաղաքական կենաց մէկ մեծ
կարողութիւն եւ ամէն նկատմամբ համակրու-
թիւն ունեցող անձ մը՝ փակեց աշուրները
մշտնջենապէս. Աստուծոյ Մոխարեան, Հայա-
քաղքի շրջանին երեսփոխանը՝ պատգամաւորաց
սենեակին 18 տարիէ ի վեր քարտուղարը՝ երկ
առաւ, արտի ցաւագին հիւանդութենէ մետեւ
փոխանցեալ:

Շատ քիչ մարդ կրնայ ցուցնել պատգամա-
ւորաց սենեակին՝ որ իրեն պէս, անընդհատ ու
ջղերն աւաղակող գործունէութիւն արտադրած
ըլլայ. Երկայն տարիներու շրջանին մէջ, սե-
նեակը՝ հազիւ թէ ունեցած է անանկ նիստ մը,
ուր որ Մոխարեան իր սովորեալ տեղը — նա-
կարահանութեան ալ բազմիկ ծայրը — բռնած ըլլ-
լայ. — կատարեալպէս թափանցած՝ ու զարմա-
նալի կերպով ճանցած էր, իր՝ մեծ ծանրակշ-

մարդու մագերէ բիզ-բիզ էին կանգնում, երբ
երեւակայութեան առաջ էր գալիս սեւ, խո-
նաւ նկուղը, այնտեղ փտող մանրը, այդ մանրը
չըլկապատող խաւար անհասկացողութիւնը. Ի-
րական մարդիկ են, մեր մահից ու արեւելից,
տանջվում են, անօգնական են. Բայց ի՞նչ ենք
անում մենք...

Եւ գիտում էի տիտղոսների եւ անուշ խօս-
քերի սիրահար ինտելիգենտին. նա, ըստ երե-
ւոյթին, զգում էր իրական սարսափի ամ-
բողջ դառնութիւնը. հաւատացած եմ, որ
նա կը կամենար, որ աղքատ հիւանդները լաւ
զրույթեան մէջ լինէին, կը կամենար, որ ըր-
ծիչը փոխանակ այդ տեսակ յուսահատական
պատմութիւնների՝ ժպիտը երեսին, գոհութիւ-
նից կերպարանափոխված ասէր մեզ՝ թէ ինչ ու
ինչ հիւանդի կարգեր կան այն ճրի հիւանդա-
նոցում, որ մենք բացել ենք աղքատների հա-
մար:

Սօսեցնէի, նա այդպէս էլ կատէր Բայց նա
չառաց, որովհետեւ խօսեցնող չը կար, իսկ նա
ինքը այնքան չէր հետաքրքրված այդ հարցով,
որ վեր կենար, պահանջէր, որ հիւանդանոց
չինի, պահանջէր մի աշխոյժով ու տաքու-
թեամբ, որ նման լինէր «պարոն» եւ «մեծապա-
տիւ» բառերի յարեցած եռանդին. Ձը կայ այդ
բանը, երեւում էր, որ պարոնը միայն կամե-
ցողութիւն ունի, իսկ դրանից մի քիչ առաջ
տանել միտքը աւելորդ եւ անհարկաւոր էր հա-
մարում, որովհետեւ չարքէ:

Բայց դրա փոխարէն, երբ ճաշի վրա, մեր
ընկերակիցներից մէկը մի թեթեւ հեգնու-
թեամբ գիտէր նրան եւ արտասանեց «բարե-
հաճեցէ՛ք» բառը իբրեւ ակնարկ, որ նա հազգին
նշանակութիւն է տալիս այդ տեսակ դիմուքին,
ինտելիգենտը դարձեալ կրակ կտրեց եւ սկսեց
սքանչելի տաք ու պերճախօս ճառը տիտղոս-
ների եւ անուշ խօսքերի մասին. Սկսվեց սուր
վիճարանութիւն. դուր էին այս ու այն կողմից
նկատում, թէ չարքէ՛ն այդքան տաքանայ, այդ-
քան երկար խօսելու Ոչինչ չօգնեց. եւ մեր ճա-
շը թունաւորված էր մինչեւ վերջ...

Եւ միայն մի փոքրիկ պատկեր ներկայացրի
ձեզ. Միտքն ընկելով այս պատկերին, դուք կարող
էք հարկաւոր ուրիշ տեսարաններ եւ դէպքեր
բերել ձեր աչքի առաջ. եւ դրանք բոլորը ցոյց
կը տան ձեզ, որ մենք մանր-մունք բաների
տեսից ենք ընկնում եւ երբեք չենք կարող
նկատել իսկական գործեր ու պահանջներ. Ի՞նչ
պահանջ, ի՞նչ առաջադիմութիւն այն մանրիկ
հոգիների աշխարհում:

Ուրիշն ունեցող քարտուղարական պաշտօնին
մէջ, խորհրդանոցի կենաց (parlamentarisme)
արուեստագիտութեան (Technik) ամէն գաղտ-
նիքներն ու ամենափոքր ծակ ու ծուկ բաները:

Մոխարեան՝ ճշմարտապէս ալ բազուկն էր
սենեակին, իրարու յաջորդող նախագահներուն,
որոնք՝ երկայն ժամանակ ու ցաւով պիտի յիշեն
իրեն հարուստ փորձառութիւնն, արագ գոր-
ծունէութիւնը, հնարագէտ միտքը, — չուտով
կարգադրելու եւ լընցընելու կերպը, եւ պայ-
ծաւ ու վերջի աստիճանի սուր յիշողութիւնը.
— ձանցան ալ իր գործունէութիւնը սենեակին
ամէն կողմնակցութիւնները. — Մոխարեանն էր,
որ զբոլոր մամուլը՝ սենեակին նիստերուն վրա-
յօք յօրինած ընտիր տեղեկութիւններով կը հո-
գար. Ասկից գաւ, միշտ կը գրէր երկու երեք
օրական թերթի համար քաղաքական յօդուած-
ներ. — Ատեն մը իբրեւ անանձինն ուսուցիչ,
քաղաքային ճառախօսութիւններ կընէր Բու-
դապէստի համալսարանին իրաւաբանական հիւ-
ղին մէջ, մինչեւ որ իր մեծ զբաղմանցը պատ-
ճառաւ հարկադրեցաւ աս ճառախօսութիւննե-
րուն վերջ տալու. — Շատ բան կորսնցուց՝ քա-
ղաքային կենսաբ. յանձին Մոխարեանի. բայց
աւելի շատ կորսնցուց լրագրութիւնն, որուն
համար հիմնեց Թոշակաւորաց ամենաբեղեցիկ
հիմնարկութիւնը:

Հանգուցեալը շատ կանուխ մտաւ քաղաք-
ային կենաց ասպարէզը. Իր չափահասութեան
օրը — 24 տարեկան եղած ատեն, — յանձնեց ի-
րեն՝ իր ծննդեան քաղաքն՝ առաջին անգամ՝

Երեւոյթը, կրկնում եւ, միանգամայն հասկանալի եւ բնական է նա գոյութիւն ունի, նա չէ կարող գոյութիւն չունենալ, քանի որ մենք այնպիսի ազգերից չենք, որոնք հասկանում են կենսական խօսքը, լաւ գիտեն թէ ով է եւ ինչ է նա, որ գալիս ծնունդ է դուռը:

Այսպիսով, ընթերցողը, Ամեն րօպէ խորհրդաւոր այցելուն մեր չէմբուսն է. նա ասում է, նա իր պարտքը կատարում է ճշտութեամբ: Եւ վայ այն հասարակութեան, որի միտքը մանր է, որ լայն հորիզոններ տեսնելու ընդունակութիւնից զուրկ է...

ՎՍՍԻԼ ԱՐԱՇԻՁԷ

Այսօր, մարտի 10-ին, վրաց դերասանական խումբը եւ վրաց հասարակութիւնը տօնում են վրաց բեմի արժանաւոր եւ տաղանդաւոր դերասան Վ. Արաշիձէի 25-ամեայ բեմական գործունէութեան յօրինանքը:

Պ. Արաշիձէի դերասանական գործունէութիւնը նշանաւոր է մանաւանդ նրանով, որ սա սերտ կապ ունի վրաց մշտական խմբի ծնունդի հետ. այս առիթով աւելորդ չենք համարում ասել մի քանի խօսք:

Երիտասարդ Վ. Արաշիձէն, չը վերջացնելով ուսումը գիմնազիայում, դառնում է ժողովրդական դպրոցների ուսուցիչ, բայց չուտով ընտրում է դերասանական ասպարէզը, հրաւիրվելով վրաց բեմը իր հիմնելու օրից—1879 թվին:

Այդ օրվանից տաղանդաւոր դերասանը չէ հեռանում վրաց բեմից, եւ անցկացնելով չորս քաջ կեսնք, մասնակից է լինում թէ՛ սրա ուրախութեանը եւ թէ՛ սրա տխրութեանը:

Այս երկար տարիների ընթացքում Արաշիձէն խաղացել է բազմաթիւ դերեր, ստեղծել է շատ տիպեր, եւ յաճախ հանդիսականներին պատճառել է էսթէտիքական բաւականութիւն իր բնածին, գեղարուեստական խաղողի նա մեծ աջակցութեամբ է կատարել միշտ բուֆ-կոմիկի դերերը, բայց սրա դուրս գործողը վրաց բեմի վրա եղել է հայ տիպեր ներկայացնելը, եւ այդ պատճառով էլ ոչ ոք չէ համարձակվում սրա ներկայութեամբ վրաց բեմի վրա ստանձնել այդ դերերը:

Բացի դերասանութիւնից Վ. Արաշիձէ վրաց թատերական գրականութեան մէջ էլ ունի իր արժանաւոր տեղը: Սա յայտնի է վրաց հասարակութեան իր բազմաթիւ թարգմանութիւններով եւ կազմած թատերական ժողովածուներով: Բացի վերոյիշեալ աշխատութիւններից, Վ. Արաշիձէ 1885—1887 թ. խմբագրում էր վրաց լեզուով հրատարակվող «Թատրոն» շաբաթաթերթը, որը սակայն դադարեցրեց իր գոյութիւնը:

Մի րօպէ անգամ չենք կասկածում, որ վրաց ազգայնականութիւնը, ինչպէս եւ միշտ, այսօր էլ կը պատէ եւ կը մեծարէ իր տաղանդաւոր մշակին, խախտելով յօրինարին ապագայում էլ չը դադարել աշխատելուց իր սիրած բեմի համար:

Գ. Միրզաբեկ

Խորհրդանոցի պատգամաւորութիւնը (mandat): Վերջին չորս շրջանին մէջ առանց ընդհատելու, միաձայն թուէ՛ով ընտրուեցաւ պատգամաւոր Կերպ Հայաքաղաքին:

Մոնարխան ծնաւ Սամուելյան քաղաքը 1847-ին: Իրաւագիտութեան ասպարէզը մշտնջող Կալաժիւր, ետքէն Բուդապէստ ընկնուց ուսումնաւոր: Վերջինին համալսարանին մէջ վաստակեցաւ իրաւանց եւ պետական գիտութեանց վարդապետական վկայականը:

Իրեւն հրապարակագիր, իր գործունէութիւնն արդէն Կալաժիւր քաղաքն սկսաւ, ուր Magyar-Polgar (Հունգարական քաղաքացի) թերթին, բաւական ժամանակ առաջին գործակիցն էր: 1870-էն սկսեալ, Բուդապէստի մէջ, շատ մը քաղաքական լրագիրներու գործակիցն էր—1879-ին Magyar-Lapok (Հունգարական թերթ) քաղաքական օրաթերթին խմբագիրն էր: 1880-ին, վրան առաւ Magyarország és Nagyvilág (Հունգարիա եւ Մեծ աշխարհ) պատկերազարդ շաբաթաթերթին խմբագրութիւնն ալ:

Ասոնցմէ զատ, շատ սիրով կը զբաղէր պատմական ուսումնասիրութեամբ: Հայաքաղաքին մենագրութեանը վրա գրած երկասիրութեամբը, հարկւր ոսկւոյ արժանացաւ:—Ի՞նչ մը երեւելի մատենագիրներ՝ հունգարերէնի թարգմանեց:

Հայաքաղաքը՝ Մոնարխանին սպալից մահուան լուրն առնելուն պէս, ընդհանուր ժողով գումարեց: Ասոր մէջ որոշուեցաւ որ զհանգուցեալն՝ իրեւն քաղաքին սիրելի զաւակը նկատելով իր յատուկ մեռեալը համարի: Ուստի իրեն փառաւոր գերեզմանատեղի մը տալէն զատ, հոգ կը տանի իր թաղմանը:—Գաղաքապետին

ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՇՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Եւկատերին օգարից, Գարեգին քահանայ Բաղդասարեանից, 150 րուբլի:

Յղնա գիւղից, աւագ-ուսուցիչ Ս. Ղազարեանից, 41 րուբլի, որ գոյացել է Յղնայի դպրոցական դահլիճում տուած ներկայացումից: Ժընէվից, Կ. Քէչէկեանից, 200 ֆրանկ եւ 6 րուբլի (79 ր. 80 կ), որ նուիրել են ժընէվի ուսանողները:

Մայկօպից, Վահան քահ. Ասկարեանից, 18 րուբլի, որ նուիրել են հետեւեալ անձինքը. Տիկին Ա. Նազարեանց եւ ընկերութիւն 10 ր., Ա. Բերբերեան 3 ր., Յ. Մարեան 2 ր., Ս. Տաւեպիչ 1 ր., Ս. Միկոլաւեւսկի 1 ր., Յ. Գրիգոր 1 ր.: Գումարն է 18 րուբլի: Ընդամենը 288 ր. 80 կ., իսկ նախկին ստացվածների հետ միասին 6348 ր. 5 կ.:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՆՈՒՑ

Մարտի 3-ին

Տառապեալներն օգնող մասնաժողովում մի կողմից չպապ եւ չը ծրարված գործունէութեան, իսկ միւր կողմից օգնութիւն հասցնելու միջոցները, չարի եւ եղանակը լաւ չուսումնասիրելու պատճառով առաջացաւ հաշիւների եւ օգտավորների մի այնպիսի խառնաշփոթութիւն, որ ուսման մէկից էլ զուրկ մնալով, միւսները երեքապտիկ սկսեցին օգտվել:

Քննելու այս խնդիրները առանձին-առանձին: Կոմիտէին սկզբնական աշխատութիւններից մէկը՝ քաղաքից մեկնողներին ճանապարհածախս տալն էր: Բաժանվեց բաւականաչափ գումար. բայց շատերը մնային տեղն ու տեղը, օգտվելով ստացածից: Միւսներին, ցուցակագրված անունների համեմատ, բաժանվեց շաբաթական դրամական օգնութիւն. սակայն նրանց մէջ մը-մը եւ նրանք, որոնք պիտի գնային Նոյան եւ երրորդ տեսակի մարդիկ, որոնց ընտանիքները, դիցուք Բագու եւ, որոնք ստացան եւ շարունակում են ստանալ համ մէկը, համ միւսը իրանց ընտանիքի շատ զէպըւմ աւելացրած գլխի հաշուով, համ էլ ընտանիքն է օգտվում:

Բագուի կոմիտէից, իսկ չորրորդ դասակարգը, որ ուղևոր սովոր չէ, բայց իրօք ողորմելի վիճակի մէջ է, տաժում է, զուրկ մնալով նը-պատանիներից: Այդպիսիների երկրաշարժի պատճառով կորուստն էլ անհամեմատ մեծ է, իսկ առաջինների նիւթական կորուստը մեծ մասամբ 40—100 րուբլով կարելի է տեղը կանգնեցնել:

Գործունէութեան ահա այս եղանակը առաջացրեց շահախնդիրների, ձրիակերների մի լեզիւն: Միւս խնդիրը վերաբերում է թէ քաղաքին եւ թէ գիւղերին մի քանի տեսակ ոչ կարելւոր իրեր բաժանելու: Մենք մտքներովս անգամ չենք անցկացնի օգնութեան ձեռք հասցնելու մէջ էլ խնայող լինել: Բայց հէնց նոյն տառապեալների օգտի տեսակէտից ցանկալի էր, որ մասնաժողովը իր նպատակներով աւելի էական, աւելի

չօչափելի դարձնէր իր գործունէութիւնը, մանր, ոչ կարելւոր բաների վրա շատ էլ չը սպառէր իր նիւթական ոյժի այն նշանաւոր մասը, որ պիտի գործ դնվի հէնց նոյն ժողովրդի օգտին: Շամախեցին եւ գաւառացին դեռ ամիսներ կա-րող էին իրանցով ապրել. բայց այժմ ամեն կողմից արշաւում են դեռ պատրաստից, կամ այլ կերպ ասած՝ ձրիից օգտվելու:

Ձէր կարող երկրաշարժը սկսվելուն պէս նը-րանց պաշարեղէնը իսկոյն չողիւնաւ. պաշարե-ղէնը մնացել է տեղն ու տեղը. բայց որովհե-տեւ մարդիկ աղէտի սկզբում ուրիշ հոգեւորով էին զբաղված, ուստի կարելւոր էր հէնց սկզբ-ումն էլ օգնութիւն հասցնել նրանց, որոնք տարում էին «զնաց մեր հանապաղ օր տուր մեզ այսօր»-ի սկզբունքով: Եւ դա պիտի կա-տարվէր խիստ աջքարաց, այլ ոչ ձեւական կեր-պով եւ ոչ էլ անխտիր զանազան շահախնդիր-ների խնամակալութիւնն ամիսներով յանձն առնել եւ անունն էլ բարեգործութիւն դնել: Այդ շահախնդիրները այժմ արշաւում են ամեն կողմից եւ դժուարութեան մէջ դնում կոմիտէ-տին էլ, որպէս զի քանի դեռ միջոց կայ, պատրաստից, կամ այլ կերպ ասած՝ ձրիից օգտվեն, մտքում կրկնելով՝ քաղաքի բաղման մալի դի. զաչանի զօյաւ:

Ընդհանուր խառնաշփոթութեան մէջ սագերն էլ ձիւ են բարձրացրել:

Շատ զէպըւմ, հակառակ արդարութեան օ-րէնքի, նկատում է կողմնապահութիւն եւ տալիս են ուղղորդն, եկողին, պատահողին, ե-րեւի մտքում «Թող տանէ, դա մերոնցից է» ա-սելով:

Այդ թափալականութեան օգին կոմիտէի մի քանի անդամներն մէջ տիրում է նրանց եկած օրից եւ շատերը այդ նկատում են իսկ երբ անարարութիւնն դէմ մարդ, համբերութիւնից դուրս գալով՝ բռնկում է, գոյանում է տհա-ճութիւն, որ աւելի եւս ցանկալի չէ:

Ո՞վ կուրանայ, որ այս ամբողջ գաւառում հայ գիւղացու թէ՛ հոգն է քիչ եւ թէ՛ եղածի մասը ծածկված է խաղողի այգիներով եւ այդ իսկ պատճառով նրանց միշտ տարվայ կէ-սից սկսած դրմից են հաց ձեռք բերում: Դա ամենքն էլ գիտեն: Բայց բաժանման ժամանակ միշտ դրանք են տուժում: Հարցիդ պատասխա-նում են՝ «մեր երեսում մեռնո կայ»: այս է կրկնում գիւղացին, այս է կրկնում քաղաքա-ցին: Մենք կարծում ենք, որ մեռնոի հարցը դէն դնելու ժամանակը եկել է, որովհետեւ տեղացի հայերի մի առակը այստեղ արդէն իրագործված ենք տեսնում, որ ասում են՝ «կուրուս անում է»՝ ձիւնու տանում:

Ս. Սարգիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրաշարժից միսնաւորութեան մէջ հարց է յարուցված՝ մրցանակ սահմանելու կողմնակալ կախիթի վազի խաղողից պատ-րաստված գինու համար: Այդ մրցանակը կը սահմանվի ըստ օրինակի այն մրցանակների,

նեցաւ դադարը, քիչ մը ետքը՝ սգոյ կառքին վրա դրին: Ասոր վրա չուն սկսաւ յառաջ շար-ժիլ: Հազարաւորներու համառոտ մարդիկներու բազմութեան պատճառաւ, ի սկզբան հազիւ թէ մարդ կրնար շարժիլ: Եւ սգոյ կառքը՝ ան առնել միայն կրցաւ ընթանալ, երբ ոստիկա-նութեան առաջնորդին վարչութեանը տակ ե-ղած զինուորը, ոստիկանութեան մարդիկ եւ ջրհանաւորը մուտքին առջեւ եղած հրապարակն ազատ ըրին:

Չուն սկիզբը կը քալէր՝ հունգարական թա-գաւորական ղեկին պահանջներուն մէկ վաշտը՝ իրենց յատուկ դրօշակին տակ: Անմի-ջապէս առնոց ետեւէն կրկնաւ վաճառակա-նաց, խաղախորդաց ու կօչկակարաց ընկերու-թիւնը, ալ ու ձախ՝ քաղքին վիճակական դա-տաստանարանին եւ ուղղութեան տեղոյն պաշ-տօնատէրները:—տէրութեան միջնադպրոցին եւ քաղաքային դպրոցներուն աշակերտները:—Թա-ղական տեսնելն առաջնորդները, հարկապահան-ջութիւնը, վարդապետի ընկերութիւնը, ս. Ան-նայի եղբայրութիւնը, ակմախորը, արհեստա-ւորաց ընկերութիւնը, քաղքին պաշտօնատա-րութիւնը՝ իւրաքանչիւրն իրեն առաջնորդին տակ:

Տրուած նշանին, փչող երաժշտաց խումբը Բէթովէնին յուղարկաւորութեան խաղացն (March) սկսաւ հնչեցնել:—Անգին բազմու-թիւնը՝ դէպ ի գլխաւոր հրապարակը՝ հայոց մայր եկեղեցին փութալու սկսաւ:

Սգոյ կառքին ետեւէն կերթային հանգուցե-լոյն որբեւարին, դուստրն ու որդին. բազմա-թիւ ազգականք, պատգամաւորաց սենեկին ան-

որոնք սահմանված են այժմ Ուրիւի գիւղին, համար:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, Բարձրագոյն բարեհաճութեամբ մարտի 14-ին Մարիինսկի թատրոնում, տեղի կունենայ ներկայացում Շամախու երկրաշարժից վնասների օգտին ներկայացումը կազմված լինի «Das Süsse Mädel» օպերետից, որ խաղալ Վիլհելմայի օպերետային խումբը:

Բագուում տեղեկութիւն է ստացված, Բիբի-Հէյրաթի արքունական հողերի կապա-նունների միջնորդութիւնը՝ նաւթի պուլաւից լրաց-բաժնեկէտարով փոխարինելու մասին՝ մերժված է եւ դրա հետ միասին իրաւունք է ստա-նում զվարել այնքան պուլաւից, որքան նա կապէս նաւթ է ստացվում, առանց ի նկատ առնելու նաւթի միջնաւ պահակութիւնը, իսկ պէս պահանջվում է պայմանագրով:

Մեզ ինչպիսիք են հաղորդել հետեւեալը. Այսօր, երեկոյան ժամը 7-ին, Հաւաքաւոր թիֆլիսի 15-րդ Գրեհադերեան զօրաշնչի դա-լիճում, հայ սիրողները կը տան չորրորդ դա-մա «Երեւանների խնամատարութեան ընկ-րութեան» օգտին, հանրամատչելի ժողովր-կան ներկայացում: Խաղալու են Գ. Սուքի-կեանի «Նյի մէկ զոհ» կօմիդիան:

Բագուից հեռագրում են տեղական լրագիրներին, թէ մարտի 7-ին, երեկոյ-ն ժամը 8-ին եւ 45 րօպէին, Բագուի կայա-նում, բազմաթիւ հասարակութեան ներկա-լութեամբ, Անդրկովկասեան երկաթուղիների կ-գնացքների կազմող Չերնիկով, որ հրաժար-րած էր պաշտօնից, հանց գրպանից մի ու-նակ եւ դրանով մահացու վէշք հասցրեց կա-րանի կառավարչի աւագ օգնական Մեւիկի-Չը նայելով բժշկական շուտափոյտ օգն-ութեան, որ հասցրին վիրաւորվածին, նա ա-րօպէից յետոյ մեռաւ: Մարդասպանը ձեր-կալված է:

Դանիական կառավարութեան գործակալ Ե-րին առաջարկել է հիւսիսային գիւղատնտես-կան ընկերութեան՝ նախաձեռնութիւն յան-առնել գիւղատնտեսների ճանապարհորդութի-կազմակերպելու դէպի Դանիա, այն ճանապ-հորդութեան նման, որ անցեալ տարի կա-ռեցին ուս գիւղատնտեսները դէպի Անգլի-ճանապարհորդութեան ծայրերը, հաշիւով ապրուստի ու բնակարանի համար կարեւ-րամը, իւրաքանչիւր մասնակցողին 200 րու-բլոց աւելի չին նստի: Ճանապարհորդներին է-նարարութիւն կը տրվի տեսնել եւ մանր-մասնաբար ծանօթանալ 20—35 կալուածներ-օրինակի ազարակների եւ տնտեսութիւնն-հետ ճանապարհորդութիւնը կը տեւէ ընդ-մէնը 14—15 օր. ժողովատեղի կը նշանակ-կամ Պետերբուրգ եւ կամ Բէլգի քաղաքն-Լուբերկն նայելով, երկրաշարժից միսն-այինները, գաւառին եւ Դանիականից հայ ք-ղաքներուն ներկայ եղող մեծամեծները:

Չուն ինտուկէտին հայոց եկեղեցին հաս-ուր սկսաւ հանդիսաւոր հոգեհանգիստը:—Կա-զմը՝ եկեղեցւոյն մէջտեղը՝ կանոնաւած քա-րաւանայակի մը վրա տեղաւորուեցաւ:—Կա-խորանին վրա պատարագեց Տ. Դուկաս Պա-նեան կանոնիկոս աւագերէցը. իսկ մէկը լո-կողմնական խորաններուն վրա ուրիշ չորս վա-զապետ Դաւաղին երկու կողմը կեցած է-ս. Գրիգոր Լուսաւորչին որբանոցին տասնե-կու՝ համազգեստ հագած աշակերտները:

Աւտուածային պաշտաման լինելուց ետե-սկսաւ չուն շարունակել իր ճամբան դէպի ք-րեզմանոց: Թաղման առնէ ամեն խանութ-կրպակ փակուած մնաց, եւ ամեն տան վ-տնկուած էին սեւ զբօսներն ի նշան քաղաք-ընդհանուր սուգին:—Դադարը կը տան-փոխն ի փոխն, քաղքին առաջին կարգի քա-ղաքները:

Չուն՝ տասուերկուքէն քիչ մը յառաջ հա-գերեզմանոցը, ուր հարկ էր, որ ոստիկա-նութեան մարդիկ կարգը պահեն, որովհետեւ համար բազմութեան եւ կառքերու էր թեանը համար շարժիլն անկարելի եղած էր: Եկեղեցական արարողութիւնը տե-տեւ Գրիգոր Լուսաւորչին վարդապետը, որ լուծեան միջնադպրոցի ուսուցիչը՝ քանի-քալ յառաջ անցաւ ու ճառախօսութիւն ըր-աւ:

Ա. ֆիլիպ

(«Հանդէս Ամսօրեայ»)

ՊԱՐԻԶ: Պետուլթիւններին հաղորդված ֆրան-

Сололаки, Орловская ул., домъ № 28,
спросить тамъ же. 3—6

Պատուէնքերով ղեկել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարարն է հռախօս № 362, գործարանական խանութինը № 772. (հ. 4)